

ՏՈԿՈՍԻ ՄԱՍԻՆ

Անօրէն եւ չար մոլութեան տեր մարդը, փոխանակ տոկոսներէն երկիւղածութեամբ հեռանալու, մեծ ցանկութեամբ կը մտերմանայ տոկոսներու շահին հետ, որը կը ցրուէ իր ուշադրութիւնը, որպէսզի արհամարհէ Աստուծոյ պատուիրանը, կը շփոթեցնէ սիրտը, որպէսզի ահեղ դատաստանի օրը չյիշէ: Միտքը այնպէս մը կը փարսցնէ, որ չգթայ իր եղբօրը հեծեծանքին վրայ, կը փակէ ալանջներն ու աչքերը ու զինք դիտողներու արհամարհանքէն չ'ամչնար այլ թշուառ հոգիին համար համարձակ կերպով յաւիտեանական հուր կը հաւաքէ եւ կը դիզէ: Եւ ինչպէս որ երկրագործները կ'աղօթեն եւ կ'աղերսեն Աստուծոյ, որպէսզի անձրեւ տեղայ ցանլած սերմերուն վրայ, նոյնպէս ալ վաշխատուն, աղփատութիւն, նեղութիւն եւ սով կը ցանկայ բոլորին, որպէսզի տրուած դրամի տոկոսին փոխարէն, մարդոց ստացւածքներուն տիրանայ: Դրամը փոխ տուած ժամանակ գուարթերես է, իսկ երբ տոկոսի պայմանաժամը հասնի եւ նկատէ պարտապանին աղփատութիւնն ու շփոթանքը, անգութ կը դառնայ, աղաչողին երդումին չի հաւատար ու նեղութեան մէջ գտնուողին աղերսանքին երբեք զիջում չի կատարեր, այլ՝ կը դառնայ անողոք ու անզիջող եւ պարտապանը կը նկատէ, որպէս իր ծառան: Կը բննէ, գիտնալու համար թէ [պարտապանը] ինչ ինչքեր ունի, որոնք կրնան իրը ըլլալ: Կը հետազօտէ, թէ ուր տարած եւ պահած է գանձնի: Բազմութեան մէջ կը նախատէ, սիրելիներուն մօտ կ'ամչցնէ եւ հանրութեան մէջ կը չարչարէ: **(Ճաներ Յովհան Մանդակունի**

ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ



Հայ եկեղեցւոյ ամէնօրեայ արարողութիւնները կը կոչուին **Ժամերգութիւն**, որոնք կը կազմեն որոշեալ ժամերու հաւատացեալներուն հոգեւոր սնունդ մատակարարող աղօթասացութիւններ, սահմանուած մեր եկեղեցւոյ Եռամեծար Վարդապետներու կողմէ, նոխացած շարականներով, սաղմոսներով, փարոզներով, որոնք տէրունի սօներու փառաբանութիւն են, սուրբերու յիշատակութեան ոգեկոչում եւ ապաշխարութիւն, ներհայեցողական ապրումներու հոգեթով արտայայտութիւն:

Հայ եկեղեցին համաձայն աւանդութեան եօթը ժամերգութիւններով հոգեւոր այս առաքելութիւնը կը կատարէ:--

Ձ ա. – ԳԻՇԵՐԱՅԻՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ, որ կը մատուցուի ի դէմս Հօր Աստուծոյ:

Անցեալի... **ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ**

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300– [facebook-ի էջ](#) [jcrak](#) [Միաց թերթ](#)



ԺԴ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 18 ՅՈՒՆԻՍ 2021 ԹԻՒ 29

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Եւ. 3.16-4.1: Ա. Կր. 1.25-30:
ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 18.10-14

ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 18.10-14

ԿՈՐՍՈՒԱԾ ՈՉԽԱՐԻՆ ԱՌԱԿԸ

Չգո՛յ՛, մի՛ արհամարհէք այս փոքրիկներէն ոեւէ մէկը: Գիտցէ՛ք, որ անոնց հրեշտակները երկինքի մէջ միշտ կը տեսնեն իմ երկնաւոր Հայրս, որովհետեւ մարդու Որդին եկաւ կորսուածը փրկելու համար:

Ի՞նչ կը կարծէք, եթէ մարդ մը իր հարիւր ոչխարներէն մէկը կորսնցնէ, չի՞ ձգեր իննսունինը ոչխարները լերան վրայ եւ չերթա՞ր փնտռելու կորսուած ոչխարը: Այո, կ'երթայ: Եւ եթէ պատահի, որ գտնէ, վստահ եղէ՛ք, որ աւելի կ'ուրախանայ այդ ոչխարին համար, քան թէ իննսունինը ոչխարներուն համար, որոնք կորսուած չեն: Նմանապէս ալ Հայրս, որ երկինքի մէջ է չ'ուզեր, որ այս փոքրիկներէն մէկը կորսուի:

Գառնուկդ գայլերուն ձեռքին մէջ՝ ինձի՛ համար

Ես խաչին վրայ ձեռքերդ տարածեցի կարծելով, որ բեզ սպաննեցի, իսկ դուն տարածուած ձեռքերովդ գիս ընդունեցիր գիրկիդ մէջ: Ես գաւազանով գլուխիդ զարկի, իսկ դուն՝ պահապանը գլուխիս, օրհնութիւններ թափեցիր գլուխիս վրայ: Ինձի համար խաչին տակ կ'եցար, որպէսզի մեղքի տակ կ'ազատուէ՛ր ոտքի կանգնիմ: Ինձի համար խաչին վրայ գլուխդ խոնարհեցուցիր եւ ինձի նայեցար հաշտութիւն խնդրելով, իսկ ես երեսդ ի վեր պոռացի՛ խաչէն վար իջի՛ր, եթէ երբեք Աստուծոյ Որդին ես: Ինձի համար Գառնուկդ գայլերուն ձեռքին մէջ ինկար, որպէսզի Չարին ձեռքին մէջ ինկա՞ս՝ փոխադրես երկնաւոր Հօր ձեռքին մէջ: Շնորհակալ եմ, Տէ՛ր Յիսուս, այդ փոխադրութեան համար:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՏՕՆ ԹԱԳԷՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՒ ՍԱՆԳՈՒԽՏ ԿՈՅՄԻ



Դուստրը՝ Սանատրուկ թագաւորին, որ աշակերտելով Թադէոս առաքելին, իր հօրմէն գաղտնի ընդունած էր քրիստոնէութիւնը: Սանատրուկ, գայրանալով այս եղելութեան վրայ, հայրական ամէն ողորհիչ միջոցներ ի գուր գործադրելէ վերջ, անդրդուելի գտնելով իր աղջկան հաւատքը, հրամայեց անոր մահը: Արքայազն օրիորդը, որ իր սեռին պատկանող շատերու ալ դարձին այսինքն՝ հոգւոց փրկութեան պատճառ եղած էր արդէն Հայաստանի մէջ, իբրեւ առաջին առաքելու չափով, իբրեւ անոր առաջին վկայուհի, իր կտրման ընդունելով նահատակող հարուածը: Ս. Թադէոս թաղեց անոր մարմինը թափուն տեղ մը: Քանի մը օր վերջ ինք եւս նահատակուեցաւ գլխատութեամբ՝ Սանատրուկի հրամանով: Երեք դարեր անյայտ մնաց անոնց գերեզմանները, մինչեւ Լուսաւորիչի եւ թերեւս նոյնիսկ Թարգմանչաց օրը: Թէեւ այս մասին յիշատակութիւն կայ Մովսէս Խորենացիի պատմութեան մէջ, բայց աւելի նոյն կերպով նկարագրուած է ան ժամանակակիցէ մը, եւ անկէ անցած Յայսմաւորէի մէջ:

Կիրակոս անուն միայնակեաց մը, որ կը բնակէր Թադէոսի եւ Սանդուխտի նահատակութեան վայրին մօտ՝ Սանատրուկ կոչուած լեռ մը, Արտագ գաւառի Շաւարշան դաշտէն ոչ հեռու, տեսիլքի մը մէջ տեսաւ ոսկի լուսաշող աթոռի վրայ բազմած մէկը, որ իր շուրջը ունէր հինգ մարդիկ, յետոյ բլուրին վրայ երեւցաւ արեւու պէս պայծառ ոսկեհուռ գգեստներ հագած թագաւորացն աղջիկ մը, որ գլխուն վրայ հրաշագեղ պսակ մը՝ եկաւ աթոռին առջեւ: Յետոյ սփանջելի կերպարանքով մարդ մը յայտնեց միայնակեացին, թէ լոյսը՝ Ս. Հոգւոյն շնորհքն է, աթոռին վրայինը՝ Թադէոս առաքելուն է, աղջիկը՝ Սանդուխտ կոյսն է, իսկ աթոռին շուրջինները՝ առաքելին աշակերտներն են: Երկու օր վերջ, երկրորդ տեսիլքի մը մէջ առաքելը, կոյսը եւ միւսները միայնակեացին կը մատնանշէին իրենց գերեզմանները: Այսպիսով գերեզմանները փորուելով բացուեցան եւ գտնուեցան նշխարները, որոնց շուրջը խոնուեցաւ ժողովուրդին երկիւղածութիւնը:

ԻՆՉ ՁԵՒՈՎ ԿՐՆԱՄ
ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԼ
Նախ՝ ողորմած ու գթած պէտք է ըլլաս եւ երբ խեղճ աղքատները տեսնես, պիտի փորձես կարելիութեանդ սահմանին մէջ անոնց օգնել, որպէսզի արժանի ըլլաս Քրիստոսի երանութեան: «Երանի՛ ողորմածներուն, որովհետեւ անոնք Աստուծոյն ողորմութիւն պիտի գտնեն» (Մատթէոս 5.7): Երկրորդ՝ պահեցողութիւն պիտի ընես:

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

ԱՍՏՈՒԾՈՅՆ ԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ԲԵՐԱԾ ՈՐՎԱՍՈՒԹԻՒՆԸ ՈՐՆԻՔ

«Գինի չունին» (Յե. 2.3): Հին Կտակարանին մէջ գինին ուրախութեան խորհրդանիշ իբրեւ կը ներկայանայ: Խօսքը պատահական ուրախութեան մը մասին չէ, այլ այնպիսի ուրախութեան մը՝ որ ծնունդ կ'առնէ Աստուծոյ ներկայութենէն: Երբ Մարիամ կ'ըսէ. «Գինի չունին», կարծէք ամբողջ Իսրայէլի ժողովուրդին մասին է որ հաստատում մը կ'ընէ: «Գինի չունին» ըսելով, կարծէք ըսել կ'ուզէ՝ «Իսրայէլի ժողովուրդը գինի չունի», այլ խօսքով՝ ուրախութիւն եւ երջանկութիւն չունի, որովհետեւ հեռացած է Աստուծոյ ներկայութենէն:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Մենք մեր կեանքին մէջ գինի ունի՞նք, այլ խօսքով, ունի՞նք Աստուծոյ ներկայութիւնը, կ'ապրի՞նք Աստուծոյ ներկայութեան մէջ, եւ մանաւանդ, կ'ապրի՞նք Աստուծոյ ներկայութեան բերած ուրախութիւնն ու ցնծութիւնը: Եթէ ձեր սրտին մէջ գինի, այսինքն՝ ուրախութիւն չունիք, մօտեցէք Աստուծոյ եւ «առանց ստակի, ձրի գինի ու կաթ ծախու առէք» (Ես 55.1):

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

ԵՐԲ ԱՂՕԹՔԻՂ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԿԸ ՓՆՏՈՒՄ ԱՍՏՈՒԾՄԷ, ԿԱՐԳՎ՝ ՍԱՂՄՈՍ 28

Տէ՛ր, օգնութիւն կ'ուզեմ քեզմէ: Դո՛ւն ես իմ ապաստանս, ականջներդ մի՛ փակէր. լուռ մնալդ պատճառ կ'ըլլայ, որ ես ողջ-ողջ գերեզման իջնեմ: Լսէ՛ խնդրանքս, երբ որ քեզմէ օգնութիւն կ'աղերսեմ, երբ ձեռքերս դէպի քու սուրբ տաճարդ կը բարձրացնեմ: Չիս մի՛ դասեր հետը ամբարիշտներուն, հետը անոնց՝ որոնք չարիք կը հասցնեն ուրիշներուն, որոնք իրենց խօսքերուն մէջ սիրալիր են մարդոց հետ, մինչ իրենց սիրտերուն մէջ չարութիւն կայ: Պատուիս՝ զանոնք իրենց գործերուն համաձայն, տու՛ր արժանի պատիժը իրենց չարսիրտ վարմունքին: Իրենց ըրածին համեմատ վարուէ դուն ալ իրենց հետ, հատուցանելով իրենց այն ինչ բանի որ արժանի են: Քանի անոնք կ'արհամարհեն Տիրոջ գործը եւ ինչ որ ան ստեղծեց, Տէրը զանոնք պիտի կործանէ այնպէս՝ որ ա՛լ երբեք չկանգնին:

Օրհնեա՛լ է Տէրը, որ աղօթքիս պատասխանեց: Չօրութիւնս է ան եւ իմ պաշտպանս. եւ ես իրեն կը վստահիմ: Իրմէ կու գայ օգնութիւնս, եւ իմ սիրտս կը ցնծայ. հետեւաբար իմ երգովս անոր գոհութիւն պիտի յայտնեմ: Տէրը իր ժողովուրդին զօրութիւնն է, ապաւե՛նը եւ փրկիչն է իր օժեպիւն:

ՄԻՇՏ ՍԱՂՄՈՍ ԿԱՐԳԱՆՔ